Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ղեկավարի 2018թ. տարեկան հաշվետու ժողով

Կայացած 2019 թվականի հունվարի 5 -ին ժամը 12-ին

Մասնակցությանբ- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար , Արևադաշտ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, համայնքի ավագանու անդամների և համայնքի թվով 32 բնակիչների:

Նիստի նախագահ Հ.Օհանյանը

<u>Լսեցին-</u> Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ղեկավարի 2018թ. տարեկան հաշվետվությունը:

Արտահայտվեցին համայնքի բնակիչներ , Վ.Ասեյանը, Գ.Պետրոսյանը, Է.Իզմիրյանը Վ. Վարդանյանը, Ա.Սարգսյանը, Մ.Մողրովյանը:

Առավել մեծ են բողոքները կապված տնամերձ հողամասերի ոռոգման ջրի խնդրի հետ, ինչի հետևանքով գյուղացին դժվարանում է վճարել հողի հարկ:

Բնակիչները ցանկանում են, որպեսզի համայնքի բոլոր փողոցներն ու ճանապարհները լինեն բարեկարգ , ապահոված լինեն գիշերային լուսավորությամբ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2018թվականի ընթացքում կատարված աշխատանքները, խոսեց հետագա ծրագրերի մասին, պատասխանեց համայնքի բնակիչների հուզող հարցերին.

Նա հայտնեց, որ համայնքապետարանի համար նույնպես առաջնահերթ են համարվում այն աշխատանքների իրագործումը , փողոցների և ճանապարհների բարեկարգումը:

Կբարելավի համայնքի ֆինանսական վիճակը՝ եկամուտների հավաքագրման մակարդակը բարձրացնելով:

Հնարավորինս կնպաստի գյուղատնտեսության և անասնապահության զարգացմանը: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանն ուղղված միջոցառումներ կկիրառվեն:

Ելույթ ունեցողները նշեցին , որ համայնքի ղեկավարը իր ելույթում մանրամասն ներկայացրեց կատարված աշխատանքները և համայնքի ղեկավարի 2018թ. տարեկան աշխատանքները գնահատում են բավարար:

<u>Որոշեցին-</u> Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ղեկավար Հովսեփ Օհանյանի 2018 թվականի տարեկան հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին գնահատել բավարար:

Նիստի նախագահ՝ **Հ. Օհանյան**

. Արևադաշտ
2019թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ղեկավարի 2018թ. տարեկան կատարած աշխատանքների մասին

Ներկայացված է 05.02.2019թ. համայնքի ղեկավարի տարեկան հաշվետու ժողովում:

/Զեկ. համայնքի ղեկավար՝ Հ.Օհանյան/

Հարգելի Արևադաշտցիներ, հյուրեր թույլ տվեք Ձեզ ներկայացնելու համայնքապետարանի և ավագանու կողմից 2018թ-ի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը կատարած աշխատանքները::

Համայնքի խնդիրները լուծելու նպատակով, համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ,համայնքի ղեկավար ավագանի: Լսելով քննարկելով բնակիչներին հուզող բոլոր խնդիրները, միջոցներ ենք կիրառում դրանք լուծել ի օգուտ մեր բնակչությանը:

2018 թվականի ընթացքում անցկացրել ենք ավագանու 8 նիստ ,պատասխանել ենք ստացվող բոլոր գրություններին և դիմումներին, համայնքի ղեկավարի կողմից հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել է 27 որոշում և արձակվել՝ 14 կարգադրություն:

Համայնքում որոշ աշխատանքներ դանդաղ են իրականանում, դա այն պարզ պատճառով , որ մեր համայնքի բնակիչները, ովքեր ունեն սեփականաշնորհված և միաժամանակ վարձակալական հիմունքներով հողատարածքներ, չեն կարողանում ժամանակին կատարել վճարումներ: Այս ուղղությամբ կատարել ենք քայլեր, որ այսուհետ կատարվեն բավարար քանակությամբ գանձումներ:Կատարվել են կազմակերպչական աշխատանքներ, որի շնորհիվ համայնքապետարանի աշխատակազմը չունեն հողի հարկի պարտքեր: 2018 թվականին առաջին կիսամյակում հողի հարկի գումարը կազմում է՝ 4683.9դրամ ՀՀ դրամ, իսկ գույքահարկի գումարը կազմում է՝ 1304.8 ՀՀ դրամ, տեղական տուրքերի գումարը կազմում է՝ 46.6ՀՀ դրամ, վարձակալական հողերի գումարը կազմում է՝ 435.4ՀՀ դրամ, պետությունից ստացած դոտացիայի գումարը կազմում է՝ 3854.1

Արևադաշտ համայնքի եկամուտների կատարողականը

առ 01.01. 2018թ. մինչև 30.12..2018թ.

- հողի հարկ – 4683.9 դրամ
- գույքահարկ - 1304.8 դրամ
- վարձակալական հողերի վարձավճար - 435.4 դրամ
- դոտացիա - 3854.1 դրամ
- տեղական տուրքեր – 46.6 դրամ

Ծախսերի կատարողական

.գյուղապետարանի աշխատավարձ	- 8589.1 դրամ
Էլ.էներգիայի գումար	- 227.4 դրամ
Կապի ծառայություն	-93.5 դրամ
Համակարգչային ծառայություններ	- 14.4 դրամ
Գործուղումներ	-
Աղբահանություն	- 448.5դրամ
հակակարկտային	100.8դրամ
մեքենաներ և սարքավորումներ /ընթ նորոգում/	150.0 դրամ

գրասենյակային նյութեր -400.0 դրամ
տրանսպորտային նյութեր -301.0 դրամ
տրանսպորտային սարքավորումներ – 399.0

Քարտուղարություն

2018թ. 01. Հունվարի մինչև 30. դեկտեմբերի

Կայացել է ավագանու նիստ	Քաղաքացիներից ստացված և քննարկված դիմումների թիվը	Մուտք արված գրությունների թիվը	Ելք արված գրությունների թիվը	Տրված տեղեկանքների թիվը
8	27	358	165	230

Համայնքի ղեկավարը բարձրացրեց հետևյալ հիմնախնդիրները

1. Համայնքի արտաքին լուսավորության ցանցի կառուցում
2. Գյուղամիջյան ճանապարհների նորոգում
3. Մշակույթի տան կառուցում

Արևադաշտ համայնքի ղեկավար՝ Հ.Օհանյան